



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

15 ապրիլ 2011 թ.

թիվ 19-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՍՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի քաղաքային հաշվային տեղամասի» ամփոփ տեղեկագիրը՝ համաձայն հավելվածի:

Ցուցումներ քաղաքներում հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 6-քաղաքային**) լրացվում է հաշվարարի կողմից մարդահամարի ժամանակ և հետագայում օգտագործվում է մարդահամարի նախնական արդյունքները ստանալու համար։

2. Ամփոփ տեղեկագրի աջ անկյունում առանձնացված վանդակ-ներում լրացվում է մարդահամարի և հրահանգչական տեղամասերի համարները, իսկ հասցեամասում լրացվում է հաշվային տեղամասի համարը։ Եթե հաշվային տեղամասի բոլոր տների (շինությունների), բնակարանների գրանցման համար ամփոփ տեղեկագրի մեկ թերթը չի բավականացնում, ապա գրանցումը շարունակում է տեղեկագրի երկրորդ թերթի վրա։ Այդ դեպքում առաջին թերթի վրա` համարից հետո, գրվում է «ա» տառը, իսկ երկրորդի վրա` «բ» (օրինակ` 3ա, 3բ) և այլն։

Հասցեամասը լրացվում է ամփոփ տեղեկագրի յուրաքանչյուր թերթի վրա, իսկ թերթերի քանակը` միայն առաջինի վրա։

3. Տների (շինությունների), բնակարանների ցուցակում լրացվում են յուրաքանչյուր տան, իսկ տան սահմաններում` առանձին տողով յուրաքանչյուր բնակարանի վերաբերյալ տեղեկությունները, որտեղ հաշվեգրվել է թեկուզ մեկ մարդ։

Ամփոփ տեղեկագրում բոլոր տներն ու բնակարանները (շենքերը) պետք է գրանցվեն այն հերթականությանբ, ինչպես դրանք գրված են հաշվարարի հուշատետրի 2-րդ աղյուսակում։ Որպեսզի այդ կարգը չխախտվի, նպատակահարմար է ամփոփ տեղեկագրի 1-4-րդ սյունակները լրացնել նախօրոք` մինչև մարդահամարի սկսվելը։

1-ին, 2-րդ, 4-րդ սյունակները լրացվում են հաշվարարի հուշատետրի 2-րդ աղյուսակի տվյալներից, իսկ 3-րդ սյունակը` 1-ին աղյուսակի տվյալների հիման վրա։

4.Ամփոփ տեղեկագրի 5-15-րդ սյունակները լրացվում են մարդահամարի ժամանակ։ Ամեն օր հաշվարարը պարտավոր է այդ սյունակներում գրառել այն տների (շինությունների) վերաբերյալ տվյալները, որտեղ մարդահամարն արդեն անցկացվել է։ 5-րդ սյունակում լրացվում են մարդահամարի հարցաթերթ(եր)ի համար(ներ)ը։ Եթե տվյալ տանը (շինությունում) կազմվել են երկու կամ ավելի տառային նշանակումով մարդահամարի հարցաթերթեր, ապա լրացվում է միայն հիմնական (թվային) համարը։ 6-րդ սյունակում գրվում է յուրաքանչյուր տանը (շինությունում) կազմված մարդահամարի հարցաթերթերի ընդհանուր քանակը։

5. 7-9-րդ սյունակներում ցույց է տրվում մարդահամարի հարցա-թերթերում գրառված բնակչության ընդհանուր թվաքանակը, իսկ 10-15-րդ սյունակներում, առանձնացվում են **ժամանակավոր ներկաներն ու բացակայողները**։

6. Ամփոփ տեղեկագրում գրանցելով յուրաքանչյուր տան (շինության), բնակարանների վերաբերյալ պահանջվող տվյալները և համոզվելով, որ ոչ մի բնակարան (շինություն) բաց չի թողնվել` հաշվարարը ըստ 9-րդ սյունակի հաշվում է տան (շինության) բնակչության թվաքանակի հանրագումարը և գրանցում 16-րդ սյունակի այն տողում, որտեղ գրված է տան (շինության) վերջին բնակարանը։ Եթե հաշվային տեղամասի մեջ մտնում է տան կեսը, ապա գրանցվում է այդ մասի հանրագումարը։ Մեկ բնակարանանոց տների (շինությունների) դեպքում 9-րդ սյունակի տվյալները փոխանցվում են 16-րդ սյունակ։ Բոլոր տները (շինությունները) ամփոփ տեղեկագրում գրանցելուց հետո, հաշվարարը հաշվում է 6-16-րդ սյունակների հանրագումարներն ամբողջությամբ` ըստ հաշվային տեղամասի, և գրանցում դրանք «Հաշվառված է հաշվարարի կողմից -ընդամենն ըստ հաշվային տեղամասի» տողում, ստուգում է հաշվարկների ճշգրտությունը (**9-րդ** սյունակի տվյալները պետք է հավասար լինեն **7-8-րդ** սյունակների տվյալների գումարին, **12-րդ** սյունակի տվյալները` **10-11-րդ** սյունակների տվյալների գումարին, **15-րդ** սյունակի տվյալները` **13-14-րդ** սյունակների տվյալների գումարին, **16-րդ** սյունակի տվյալները` **9-րդ** սյունակի տվյալներին), գրառում է ամփոփ տեղեկագրի լրացման ամսաթիվը և ստորագրում է այն։

7. Եթե ամփոփ տեղեկագիրը լրացվում է մի քանի թերթով, ապա հաշվարարը հաշվում և գրանցում է հանրագումարներն ամփոփ տեղեկագրի յուրաքանչյուր թերթի վրա «Հաշվառված է հաշվարարի կողմից-ընդամենն ըստ էջի» տողում, իսկ ամփոփ տեղեկագրի վերջին թերթի վրա գրառում է նաև հաշվային տեղամասի հանրագումարն ամբողջությամբ` ըստ հաշվային տեղամասի, որը ստուգվում է առանձին էջերի հանրագումարները գումարելով։

8. Ափոփ տեղեկագիրը լրացնելուց և հաշվային տեղամասի հանրագումարը հաշվելուց հետո, հաշվարարը տեղեկագրի առաջին էջի վրա գրառում է կազմված հսկիչ թերթերի, վերահսկիչ փաստաթղթերի, ուղեկցող թերթերի և մարդահամարն անցնելու մասին բնակչությանը տրված տեղեկանքների քանակը։

9. Մարդահամարի ամբողջ ժամանակաընթացքում հրահանգիչ-հսկիչը մանրագնին հետևում է ամփոփ տեղեկագրի ճիշտ լրացմանը` ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր բնակարանում (շինությունում) հաշվեգրված անձանց թվաքանակի, հատկապես ժամանակավոր ներկաների և բացակայողների հաշվառմանը։

10. Մարդահամարի ավարտից հետո (մինչև վերահսկիչ շրջագայություն սկսելը), հրահանգիչ-հսկիչը մարդահամարի նյութերը հաշվարարներից ընդունելու ժամանակ համեմատում է ամփոփ տեղեկագրում գրառված բնակչության թվաքանակը մարդահամարի հարցաթերթերի տվյալների հետ, ստուգում է հանրագումարների ճշգրտությունը և ուղղում թվաբանական սխալները։

11. Վերահսկիչ շրջագայության ավարտից հետո հրահանգիչ-հսկիչը, հաշվի առնելով վերահսկիչ շրջագայության ժամանակ մարդահամարի հարցաթերթերում կատարված բոլոր փոփոխությունները, ուղղումներ է մտցնում ամփոփ տեղեկագրի 6-15-րդ սյունակներում ըստ յուրաքանչյուր բնակարանի (շինության), որտեղ փոփոխություն է կատարվել։ Միալ թվի վրա խնամքով գիծ է քաշում և գրում ճիշտ թիվը կամ գրառումը։ Համապատասխան ուղղումներ են մտցվում նաև 16-րդ սյունակի տան (շինության) հանրագումարում։

«Հաշվառված է հաշվարարի կողմից» տողերում հանրագումարները չեն ուղղվում։

12. Հրահանգիչ-հսկիչը, հաշվի առնելով կատարված ուղղումները, հաշվում է հանրագումարներն ըստ յուրաքանչյուր էջի և ամբողջությամբ ըստ հաշվային տեղամասի և գրառում է դրանք «Ընդամենը` հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» տողում։ Այդ տողերում ուղղումներ չլինելու դեպքում կրկնվում են «Հաշվառված է հաշվարարի կողմից» տողերում հաշվարարի կողմից կատարված գրառումները։

13. Եթե հրահանգիչ-հսկիչը վերահսկիչ շրջագայության ժամանակ հայտնաբերի, որ հաշվարարը մարդահամարի ժամանակ բաց է թողել որևէ բնակարան (շինություն), ապա նա բաց թողնված բնակարանի վերաբերյալ տվյալները պետք է գրանցի ամփոփ տեղեկագրի համապատասխան տան (շինության) սյունակում, լրացնելով 4-15-րդ սյունակները, ինչպես նաև ուղղի տան (մասնաշենքի) հանրագումարները 16-րդ սյունակում։

14. Եթե վերահսկիչ շրջագայության ժամանակ հրահանգիչ-հսկիչը լրացնում է հսկիչ թերթ, վերահսկիչ փաստաթուղթ և տալիս է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին, ապա նա համապատասխան փոփոխություններ է կատարում ամփոփ տեղեկագրի առաջին էջում։

15. «Վերահսկիչ շրջագայության արդյունքները» բաժինը` ամփոփ տեղեկագրի առաջին էջում, լրացնում է հրահանգիչ-հսկիչը վերահսկիչ շրջագայության ավարտից հետո` իր հուշատետրի 2-րդ աղյուսակի տվյալների հիման վրա, որտեղ նշված են այն բոլոր դեպքերը, երբ մարդահամարի հարցաթերթերում բաց են թողնված կամ սխալմամբ գրանցված են անձինք։

Մարդահամարի հարցաթերթերում գրանցված բնակչության ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տվյալները` 9-րդ սյունակի հանրագումարը «Ընդամենը հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը-ընդամենն ըստ հաշվային տեղամասի» տողում, պետք է հավասար լինի 9-րդ սյունակի «Հաշվառված է հաշվարարի կողմից-ընդամենն ըստ հաշվային տեղամասի» տողի տվյալներին գումարած ամփոփ տեղեկագրի առաջին էջում «Վերահսկիչ շրջագայության արդյունքները» բաժնի 1-ին սյունակում լրացված «բաց թողնվածների» ընդհանուր թվաքանակի և հանած նույն բաժնի 4-րդ սյունակում «սխալմամբ գրանցվածների» ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տվյալները։

16. Վերահսկիչ շրջագայության ավարտից հետո հրահանգիչ-հսկիչը գրառում է վերահսկիչ շրջագայության ամսաթիվը և ստորագրում ամփոփ տեղեկագիրը։ Եթե ամփոփ տեղեկագիրը կազմված է մի քանի թերթերից, ապա ստորագրությունը և ամսաթիվը գրառվում է միայն վերջին թերթի վրա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության

2011 թվականի մարդահամար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 19-Ա որոշման

Ձև թիվ 6-քաղաքային

	
Մարդահամարի տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասի համարը
	

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ

N----- (կազմված է----- թերթերից)

Մարզ-----Տարածաշրջան-----

Քաղաք-----Վարչական շրջան-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(լրացվում է հրահանգիչ- հսկիչի կողմից)

Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում բաց է թողնվել (մարդ)	Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում սխալմամբ գրանցվել է (մարդ)				
		այդ թվում`		այդ թվում`	
Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ	Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>

Ընդամենը կազմվել են (քանակը)

Հսկիչ թերթ (Ձև թիվ 4)-----

Վերահսկիչ փաստաթուղթ (Ձև թիվ 6)-----

Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)-----

Բնակչությանը տրվել է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին (Ձև թիվ 5)-----

